

ՇԱՀՎԵԼԱԴՆ ՈՒ ԲԱՆԳԼԻԲԱՐԸ / Հայ ժողովրդական հեքիաթներ, Հատոր VIII / Գուգարք (Լոռի), Լոռու բարբառ (խոսվածք)

Ըլըմ ա չլըմ, մի թաքավոր ա ըլըմ: Էդ թաքավորի կնիկը չոր ա ըլըմ, ըրեխա չի բերելիս ըլըմ: Մի գրբաց գալիս ա գիր անըմ, ասըմ ա.— Ձեր բաղըմը մի ծառ կա, չկել հմի սուբահ ա էլել, հմի իրեք խնձոր ա բռնել, գնացեք քաղեցեք բերեք, մեչը տուր կնգանըդ, կլպընին էլ տվեք ձեր ձիուն:

Գնըմ են էդ խնձորնին բերըմ, կլպըմ են, մեչը տալիս են՝ կնիկն ա ուտըմ, կլպընին էլ տանըմ են ձիուն տալի: Անց ա կենըմ իննըն ամիսը, թաքավորի կնիկը մի տղա ա բերըմ, անըմը դնըմ են Շահվելադ, էն ձին էլ մի քուռակ ա բերըմ, անըմը դնըմ են Բանգլիբար:

Ով տարով կվենձանա, էդ տղեն ու քուռակն օրով են վենձանըմ: Եդնա Բանգլիբարը իմաստուն ա ըլըմ: Էդ տղեն էլ վենձանըմ ա, շկոլ գնալու հասնըմ, ամեն օր գրքերը վիկալած գնըմ ա շկոլը, գալի: Գալիս ա աղաք Բանգլիբարի տակը թամզըմ ա, թիմարըմ, ճկատիցն էլ պաչըմ, նոր տուն ա գալի հաց ուտելու: Անց ա կենըմ խելի վախտ, թաքավորի կնիկը ուրընտու հետ ա ընգնըմ (ցավի գա նա): Տղեն բրաուրդ ա անըմ, մոր հետ կովըմ ա, թքըմ ա, մրըմ ա: Մերը տենըմ ա, որ իրա շնութինն աշկար տի ըլիլ, ուզըմ ա տղի գլուխն ուտե (էդ թավուր մոր կոխկերքը ծակվի):

Շահվելադը, որ գնըմ ա շկոլ, չայի մեչը դա բերըմ ա դեղ ա գձըմ, որ գա խմե, մեռնի:

Ըշկովիցը գալիս ա թե չե, մերն ասըմ ա.— Շահվելադ ջան, էսքան վախտ սոված ես, արի չայ խմե, հաց կի:

Հմա ո՞րդի: Շահվելադը որ ըշկովիցը գալիս ա. չկելը գնըմ չի Բանգլիբարին տենըմ, թիմարըմ, տակն ավըմ, ալափ տալի, մի բան էլա ուտըմ չի ինքը:

Մերն ինչքան ասըմ ա, դա անգաճ չի դնըմ, գնըմ ա գոմը: Գնըմ ա տենըմ, որ Բանգլիբարն էսքան լաց ա էլել, էսքան ոտները գեղինն ա տվել ու քրդնքըմը կորել, էլ ասելու ոչ:

Գնըմ ա ճակատիցը պաչըմ, ասըմ ա.— Ի՞նչ ա էլել, որ տհեղաց ես ըլըմ:

Էնա Բանգլիբարը լիզու ա ըլըմ, ասըմ ա.— Ըսօր քու վերջի օրն ա, քու մերը չայի մեչը դեղ ա գձել, որ խմես, մեռնես, իրան արածնին աշկար չլին:

Ասըմ ա.— Բա հմի ո՞նց անենք:

Ասըմ ա.— Որ գնաս տուն, կատուն կլավ-կլավը գալով կգա աղաքդ, որ մերդ բերե չայը դնե ըղաքիդ, մըքիչ կածես կատվի աղաքը, թե կատուն խմեց ու բան չի էլավ, ընդով դեն էլ խմե, թե որ կատուն խմեց ու տրաքեց, ընդով չայը դեն ածա, խմես ոչ:

Շահվելադը Բանգլիբարի տակն ավըմ ա, քրդինքը ցմաքացնըմ ա, ալափ ա տալիս ու գալի տուն:

Մերն ասըմ ա.— Բալա ջա՛ն, ախր չայըդ հովացավ, ի՞նչ էլար:

Ասըմ ա.— Նանի ջա՛ն, գոմըմն էի:

Ասըմ ա.— Բանդ ու գործդ կտրե՞լ ա, նոքարնին կարեին ո՞չ ձիուն ալափ տան, որ դուն ես սոված-ծարավ գնըմ չըրչարվըմ:

Եդնա բերըմ ա չայն ըղաքին դնըմ, հացն էլ հետը: Հլե մին էլ տենըմ ա հրես կատուն կլավելեն էկավ: Դա հացը չայըմը թթախըմ ա ու կատվի ըղաքին վեր գձըմ: Կատուն ուտըմ ա ու չաբալամիշ գալի, դես ու դեն վագ տալի ու տրաքըմ: Էնա Շահվելադը չայի ըստաքանը վրա ա անըմ, տալի գեղնովը, ջարթըմ: Մերը հսկանըմ ա, որ դրան խաբար տվողը Բանգլիբարն ա: Հմի էլ միտկ ա անըմ, որ առաչ Բանգլիբարի գլուխն ուտե: Գնըմ ա չորացած լոշեր ա առնըմ, բերըմ ա լքցնըմ դոշակի տակը, խտոր ա ընգնըմ ու տնքտնքըմ:

Թաքավորը գալիս և ասում.— Ի՞նչդ և ցավը:

Ասում և.— Ես հիվանդ եմ:

Եղևա դես և շուռ գալի, դեն և շուռ գալի, տնքտնքում և, վրչվոչում և, էն անդեր լոշերն էլ ընդի հենց ճոճում են, որ թաքավորը հե գիդենում և, թե կնգա ոսկոռնին և նհե ձեն հանում:

Ասում և.— Ա՛յ կնիկ ջա՛ն, բա հմի ի՞նչդ և ցավը, բա հմի ի՞նչ ես ուզում, ի՞նչ կուտես:

Ասում և.— Սաղ շանս կոտրատվում և, ոսկոռնիս ջարթվում են, մի բան էլա ուզում չեմ, մենակ թե Բանգլիբարի թոքն ու ջիգյարը կխրովեք, կուտեմ կլավանամ, թե չէ մեռնիլ տիմ (ջհանդամին մեռնես, վայ տամ քու անսկամ գլուխը):

Թաքավորը մոկի եղևա և ընգնում, ասում և.— Մինուճար տղի ձին ո՞նց մորթեմ, նրա քեփը խարաբ անեմ:

Շահվելադն ըշկուլիցը գալիս և, եղ վազ տալի, գնում և գոմը: Գնում և տենում, եղ Բանգլիբարը քրդնքըմը մտած, եղ նհե էնքան ֆողը ոտով փորել և ու գլխին ածել, որ գեղինը ֆոր և կտրել, ըրտասունքը միչին գոլ կանգնել:

Գնում և եղ ճկատիցը պաչում, Բանգլիբարն ասում և.— Ըսօր իմ վերչի օրն և, սհե՛սհե՛:

Ասում և.— Բա հմի ի՞նչ անենք:

Ասում և.— Գնաս տուն թե չէ, հերդ գալ տի քի ասիլ, որ ասես՝ հա, ասա. «Հայրիկ ջան, բա իմ պիած ձիուն մին էլա վեր չեմ էլել, հմի բերըմ եք մորթե՛ք»: Ընդով քու հերը կասե. «Մի անքամ էլա վեր իլ, հավեսդ հանե»: Կասես. «Դե մի թամբն առ»: Թամքը վրես կդնես, մի քանի հետ դես ու դեն կխաղացնես ու գլուխս բաց կթողաս, մենք կհեռանանք ուրիշ ըշխարի վրա:

Շահվելադը Բանգլիբարին թիմարում և, տակն ավլում, ալափ տալի, գնում և տուն:

Հերը գալիս և, ասում.— Բալա ջան, քու մերը մեռնում և, Բանգլիբարի թոքն ու ջիգյարն և ուզում, որ սղանա, ի՞նչ ես ասում:

Ասում և.— Ինչ տիմ ասիլ, հայրիկ ջան, հմա իմ պիած ձին մին էլա վեր չեմ էլել, թողուլ չե՞ս մին էլա վեր ըլիմ:

Ասում և.— Խի չեմ թողուլ, բալա ջա՛ն, մին էլ վեր իլ, տասնմին էլ, ըսօր չկել ըրիգու հավեսդ հանե:

Եղևա հերը մի լավ թամբն և առնում, Բանգլիբարին դուս են բերում, թամքում, հագրում:

Շահվելադը վեր և ըլում, որ մին էլ պլետում և, Բանգլիբարը ծուլ և ըլում, երգնքին և հասնում:

Խալխը սաղ թմաշա և դուս գալի:

Մի քանի հետ դես և խղացնում, դեն և խղացնում, մին էլ գալիս և հորն ասում.— Մնաս բարով, հայրիկ ջան, դու խափվել ես, հմա ես՝ չէ:

Ասում և ու Բանգլիբարի գլուխը վեր թողում: Բանգլիբարը ծուլ և ըլում, վեր գալի, մին էլ երգընքովը թռչում, գնում և մի ըշխարի վրա: Գնում և գնում և, ինքն ու իրա ձին գիդեն, գնում և մի թաքավորի ֆողըմ վեր գալի, ըտի Բանգլիբարն ասում և.— Ինձանից իրեք մագ վի կալ, որդի տեղդ նեղ կլի, ծուխ արա. ես կըշտիդ եմ:

Բանգլիբարի ճկատիցը պաչում և, բրախում, ինքը գնում: Գնում և մտնում եղ քաղաքը, գնում և մի ոչխարի դառին էլ առնում, գլուխն և անցկացնում, շորերն էլ փոխում և, գնում և թաքավորի պալատի դառնը կաղնում, ասում և.— Ինձ նոքար չեք անի՞լ:

Թաքավորն ասում և.— Խի՞ չէ, արի մեր դագերը պահե:

Դա գնում և թաքավորի դագերը պիւմ, քշերն էլ գնում և դագերի հետ դագանոցըմը քնում: Մի օր էլ դագերը տանում և ըրածացնելու թաքավորի բաղի միչին, ընդի մի հավուզ և ըլում, դառնիւր գլխիցը հանում և ու երեսն ու գլուխը լվանում: Եղ թաքավորն էլ իրեք ախչիկ և ունենում, երկուսին մարթի տված և ըլում, պուճուրը դեռ հլա իրա կշտին և ըլում: Բաղի միչին սեհրն անելով գալիս և եղ հավուզի կուշտը, որ գալիս և տենում իրանց դագարածը երեսը

լվանում ա, ոսկի խուճուճ մագերէն ու ըրեսի սիրունութիւնը որ տենում ա, էն ա հա ուշկն ուզում ա գնա: Շահվելադը որ տենում ա դրան, կրմրատակած խատատ-մատատ դառինը գլուխն ա անցկացնում:

Թաքավորի ախշիկն ասում ա.— Ա՛յ տղա, դուն ո՞վ ես, որ էկել ես մեր դագարածը դառել, էդ դառինն էլ գլուխդ անցկացրել, թե մթամ քաչալ ես:

Ասում ա.— Ես մի քյասիբ տղա եմ:

Էդ ախշիկը տենում ա նրանից կարաց ոչ դուզ բան իմանա, հմա սիրտը լըզլըքում ա, ասում ա.

«Կա, կա ոչ, սա իմն ա»: Եղնա թողում ա փախչում:

Մի օր էլ թաքավորն ասում ա.— Իմ ախշկանը հրսանիք տիմ անիլ, ում հվանում ա, թող խնձորով տա՝ իրա հմար ուզեմ:

Եղնա ախշկանը նստացնում ա ակոշկումը, մի կարմիր խնձոր էլ ձեռին, ասում ա.— Ախշիկ ջա՛ն, քեզ իմ ախշկերանցի շատ եմ սիրում, թողուլ տիմ քու փեսացուն դու ջգես, ում համյաթ տենաս ու խնձորով տաս, նրան էլ տալ տիմ քեզ:

Ինչքան ջահելնի կա, ինչքան նազիրվեզրի տղա կա, ինչքան հարուստ աղենու տղեք կան, չիմ գալիս են անց կենում, մնին էլա խնձորով տալիս չի: Հմի էլ գալիս են քյասըբնու տղեքնին են անց կացնում, էլ էդ տալիս չի:

Թաքավորն իրա երկու փեսին գձում ա քաղաքն, ասում.— Տեհեք էլ ո՞վ մնաց:

Նրանք գնում են, գալիս ասում են.— Էլ մինն էլա մնացել չի: Ըստիան ընդիան ասում են.—

Ղագարած քաչալն ա մնացել, ղագարած քաչալը:

Էդ երկու փեսեն ասում են.— Պա՛հ, նրան էլ եք մարթ հաշըվը՞մ:

Թաքավորն ասում ա.— Հլա նրան էլ կանչեցեք:

Կանչում են, գալիս ա ակոշկի տակովն անց կենալիս ա ըլում, ախշիկը խնձորը վրա ա անում, դրան տալի: Խալիսը մնում ա ըրմացած:

Թաքավորը կտաղում ա, ասում ա.— Տո՛ փչվիս դու, բա քաչալ ղագարածն էր մնացե՞լ, էսքան լավ տղեքը թողած:

Ախշիկն ասում ա.— Թե դրան կտաս կուզեմ, թե չե՝ մնին էլա ուղիլ չեմ:

Թաքավորը կտաղում ա, ասում ա.— Դե դուս ի՛լ իմ տանից, անսկամ, գնա քաչալի հետ ղագանոցումը կաց:

Ախշիկը վեր ա կենում, գնում ա ղագանոցը, ընդի կենում: Ինչքան իրա քվորտինքը դնամիշ են անում, հերը թքում ա մրում, իլլաջ չի ըլում, քաչալի կշտիցը դրադ չի ըլում: Ասում են.— Գլուխն իրանը քարը, թող կենա:

Շահվելադն ու իրան նշանածը էդ ղագանոցումը կենում են, ղագերը պիււմ, նրա հախովն ապրում: Մի օր թաքավորը դժար հիվանդանում ա, ինչ դեղ ու դիր անում են, իլլաջ չի ըլում, սղանում չի:

Հեքըմնին ասում են.— Սրան մենակ ասլանի կաթը կլավացնե:

Ո՞վ գնա, ո՞վ չի գնա, էն երկու փեսեն աղաք են գալի, ասում են. «Մենք կգնանք կբերենք»:

Իրանց հմար ամեքը մի լավ ձի են ջզում, մի տոպրակ ոսկի վեր ունում, գնում են, որ ասլանի կաթը տին բերիլ:

Շահվելադը կնգանն ասում ա.— Գնա՛ հորդ ասա՝ մի ձի էլ ինձ տա, ես էլ գնամ, բալի բերեմ:

Ախշիկը գնում ա հոր կուշտը, ասում ա.— Հայրիկ ջան, մի ձի էլ տուր իմ մարթին, նա էլ գնա, բալի բերե:

Էն երկու քիրն ընդի են ըլում, դրա գլխին տալիս են, ասում են.— Ի՛, վայ քու գլխին, մեր աժդահա մարթիքը գնացին էլ, կբերեն էլ, քու քաչալը տի գնալ բերի լ:

Դա որ շատ դանչանք ա անըմ, հերն ասըմ ա.— Ջհանդա՛մը գնա՛, գնացեք մի դաթիր էլ իրան տվեք, թող գնըմ ա գնա:

Բերըմ են ձիանու միջից մի քոսոտ դաթիր են ջոզըմ, բերըմ են տալի Շահվելադին: Շահվելադը դրան վեր ա ըլըմ չկել քաղաքի դրադը, ցինգեր-ցինգեր անելով քշըմ ա, ընդի տանըմ ա մի տեղ հորըքըմ, իրան Բանգլիբարի մազը ծուխ ա անըմ: Հլե մին էլ տենըմ ա— Բանգլիբարը ըղաքին կազնեց: Դառինը հանըմ ա, իրան շորերը ձիու թամքին կապած էր, վեր ա ունըմ հաքնըմ, վեր ա ըլըմ, թոցնըմ: Մի ուրիշ ճամփով գնըմ ա էդ էրկու փեսի աղաքը կտորըմ, մի չոբանից իծի կաթն ա առնըմ, գնըմ ա մի վերունի ծմակըմ նստըմ, որ էրկու փեսեն գալ տին գետն անց կենալ:

Իրանց սոխկոռնով գալիս են հասնըմ դրան, ասըմ են.— Բարի օր քեզ, դարիբ ախալեր: Խոնարվըմ են դրա ըղաքին:

Ասըմ ա.— Աստու բարին, խեր ըլի, ո՞ւր եք գնըմ:

Ասըմ են.— Ֆլան թաքավորը դժար հիվանդ ա, գնըմ ենք ասլանի կաթը գդնունք:

Ասըմ ա.— Ես ասլանի կաթն եմ ծախըմ:

Դրանք ուրախանըմ են, ասըմ են.— Ի՞նչ արժե:

Ասըմ ա.— Ես հախով չեմ ծախըմ:

Ասըմ են.— Բա ո՞նց:

Ասըմ ա.— Ամնուդ քմակին մի դամդը տամ, տարեք:

Դրանք իրար ըրեսի մտիկ են անըմ, եղնա ասըմ.— Հա, մեզ ի՞նչ տի ըլիլ, արի տհենց անենք, դառողակ չի էդ գնանք, վրեններուս կծիծաղին:

Բերըմ ա դրանց եղի կոնուց ամնուն մի հետ դամդըմ, էն իծի կաթն ամաններուն ածըմ, ճամփու դնըմ: Դրանք թող ուրխանալով էդ գան, ինքը էդ Բանգլիբարին վեր ա ըլըմ, գնըմ:

Բանգլիբարն ասըմ ա.— Ֆլան տեղը ասլանի ոտը քարիեց ա էլել, մխկտըմ ա, կարըմ չի տեղիցը ժաժ գա, գնա նետ ու անեղզ գձե, բլցրու, նա քու ուզածը կտա:

Շահվելադին տանըմ ա հասցնըմ ասլանի կուշտը, ինքը դրադ ըլըմ: Շահվելադը գնըմ ա տենըմ, որ ասլանը վեր ա ընգել ու վնգստըմ ա: Դարի տակիցը նետանեղը գձըմ ա, գնըմ ա թուշ քարիեցը պատորըմ, անց կենըմ: Ցավը ջիգյարին ա տալի ասլանի, ասըմ ա.— Իսան օղլի, ճանգս ընգնիս՝ թիքաթիքա կանեմ, բա իմ ցավն ինձ բոլ չի՞:

Հմա որ մխելի վախտ անց ա կենըմ, ցավը բոշանըմ ա, ասըմ ա.— Իսան օղլի, դուս արի, դուն իմ փրկողն ես, ասա տամ ուզածըդ:

Շահվելադը դուս ա գալի, ասըմ ա.— Քու ջանի սաղութինն ա իմ ուզածը:

Ասըմ ա.— Չէ, դու չկել մի փորացավ չի ունենայիր, ինձ ազատիլ չէիր իմ նեղ դրութենից, իսանին էիթիբար չկա, ասա ուզածըդ տամ:

Ասըմ ա.— Իմ ուզածն ասլանի կաթն ա, թե կտաս, կաթը տուր տանիմ:

Ասըմ ա.— Իմ ազատողին ջանս չէի խնահիլ, կաթն ի՞նչ ա որ:

Եղնա գնըմ ա կաթը կթըմ, մի ըմանի մեչ լքցնըմ, գալիս ա Բանգլիբարին վեր ըլըմ, գալիս ա հասնըմ քաղաքի դրադը: Գալիս ա տենըմ, դեռ էն դաթիրն ընդի կապած ա: Բանգլիբարին էդ վեր ա թողըմ, դաթին վեր ըլըմ, գալի տուն: Գնըմ ա մտնըմ դազանոցը, տենըմ ա իրա կնիկը նստած լաց ա ըլըմ:

Ասըմ ա.— Հը՛, ի՞նչ ա էլել, թաքավորը ո՞նց ա:

Ասըմ ա.— Նրանք կաթը բերին, խմեց, ջլիզ դժարացավ, ֆոքու հետ ա:

Ասըմ ա.— Դե ասլանի կաթը հասցրու, վախիլ մի՛:

Կաթը տանում ա, վրեն ծիծաղում են, ասում են.— Ով գիդե ընչի կաթն ա, էնա ասլանի կաթը խմեց, որ լավանալու ըլեր, կլավանար, ֆողը քու շաշ գլխին, քու քաչալի բերածով պտի վեր կենալ:

Ասում ա.— Բան չի կա, հլա էս էլ փորձենք, բալի մի բան անե:

Որ շատ խնթորում ա, մերն ասում ա.— Հլա էս էլ փորցենք:

Ասլանի կաթը տանում են հլե թաքավորին խմացնում են, թաքավորը եղ ա գալի, վրա նստում: Էն էրկու քվոր գլուխըվեր չի ունում, ասում են.— Վա՛յ քու գլխին, մեր մարթկերանց բերածը լավացրուց, հե գիտես քու քաչալի բերածը տղացրո՞ւց:

Էն նաչարն էլ բան չի ասում, ուրխանում ա, որ իրա հերը վի կացավ, ուրխանալով գալիս ա իրա քաչալի ճտովն ընգնում, ուրխանաս, ինչ ուրխանում են:

Անց ա կենում խելի վախտ, հմի էլ թաքավորի կնիկն ա հիվանդանում: Դես ու դեն են անում, հմի էլ ասում են Ասլանի միսը դրան կսաղացնե: Ո՞վ բերե, ո՞վ չբերե, եղ էն էրկու փեսեն աղաք են ընգնում, թե.— Մենք կբերենք:

Եղ նհե գնում են, Շահվելադն էլ մի դաթրի յա վեր ըլում, գնում ա եղ Բանգլիբարի մազը ծուխ անում, գալիս ա վեր ա ըլում ու պատ տալի, աղաքներուն կտրում, գնում ա հմի էլ մի ալապստրակ ա սպանում, եղ էն ծմակըմը ճամփա ա պիւրմ: Դրանք գնում են դես ու դեն ընգնում, եղ գալի ջիւրմ ըտի:

Ասում են.— Ղարիբ ախպեր, հմի էլ մեզ ասլանի միս ա պետկը:

Ասում ա.— Ծախում եմ:

Կրակի գա դա իրան արած բաներով, բերում ա եղ դրանց քմակիցն ամնուն մին էլ ա դաղում: Դրանք եղ ալապստրակի միսը վի կալած, ուրխանալով գալիս են: Շահվելադն ըտի իրա Բանգլիբարին վեր ա ըլում:

Բանգլիբարն ասում ա.— Հրե ֆլան տեղը ծառը վեր ա ընգել, ճուխկն ասլանի ընդամըմը թաղվել ա, գնա հանե, քու ուզածը կտա:

Տանում ա ըտի հասցնում, ինքը դրաղ ըլում: Շահվելադը գնում ա տենում, որ մի եքա ճուխկը մտել ա ասլանի անդամը, մխկիտը ջիգյարն ա տվել:

Թաքուն գնում ա թոզն անդամի փետիցը կապում, ծերը բերում դարի տակը, մի դափիլ ձիք ա տալի, ընդամիցը որ դուս ա հանում, ասլանը տեղիցը ծուլ ա ըլում, վեր գալի, ասում ա.— Հե՛յ-հե՛յ իսանողլի, կշտիս ըլեիր, թիքա-թիքա կանեի:

Հմա եղ որ մխելի անց ա կենում, ցավը կտրում ա, ասում ա.— Դուս արի, իսանողլի, ասա ուզածդ տամ:

Շահվելադը դուս ա գալի, ասում ա.— Իմ ուզածը քու սաղութինն ա:

Ասում ա.— Չե, իսանին էհտիբար չի կա, դու մի փորացավ կունենաս, ասա ուզածդ տամ:

Շատ որ ասում ա, ասում ա.— Իմ ուզածը ասլանի միս ա:

Ասլանը մտիկ ա անում, ասում ա.— Իսանողլի, լավ սիրտս տեղիցը հանում ես, հմա որ խոսկ եմ տվել, անիլ տիմ:

Ասում ա.— Գնա իմ ճուտերիցը մինը տար, հենց տար որ աչկս տենա ոչ, անգաճըս ձենն իմանա ոչ, թե չէ՝ թիքա-թիքա կանեմ քեզ:

Շահվելադը գնում ա ասլանի բունը գոնում, մի ճուտի բերանը փակում ա ու տանում մի խոռը ձորում մորթում, միսն ածում խուրջինը, Բանգլիբարին վեր ա ըլում, գալիս ա տուն: Գալիս ա իմանում, որ իրա զանքաչը ֆոքու հետ ա, իրա նաչար կնիկն էլ ձեռները ծոցին՝ լաց ա ըլում: Էն էրկու փեսեն էլ իրանց կնանտնց հետ բալկոնըմը սիլի-բիլի են անում, որ դրան տենում են. «Ըհը, քաչալն էկավ, քաչալն էկավ»— ասում են ու ծիծաղում:

Քաչալը միսը տալիս ա իրա կնգանը, ասում ա.— Տար, վախիլ մի, լավանալ տի:

Տանըմ ա միսն էփըմ ա, մորն ուտացնըմ, նրանց ծիծաղին բանի տեղ չի դնըմ, հլէ մին էլ տենըմ ա մերն աչկերը բաց արավ, վրա նստեց, մնըմ են հուշ էլած, հմա էն էրկու քիրն ու փեսեն տնագ են անըմ, ասըմ են.— Վաչ քու գլխին, խու քու քաչալի բերածով չի լավացավ, մեր մարթկերանց բերածով լավնացավ:

Էլ եդ նաչարը լաց ըլելով գալիս ա իրա քաչալի կուշտը, քաչալն ասըմ ա.— Վախիլ մի, խու մերդ լավնա՞ցավ, էլ ի՞նչ ես դարդ անըմ:

Ասըմ ա.— Ախր ես գիդեմ, որ քու բերածով լավնացավ, նրանք խի՞ են իրանց բերածը հաշվըմ:

Ասըմ ա.— Թող հմի էլ տհենց ըլի, ի՞նչ անենք, դժարն էն էր որ մերըդ լավնացավ: Եդ դրանք իրար փթաթորվըմ են, պչպաչորվըմ, իրանց դագանդցըմը կենըմ:

Անց ա կենըմ մխելի վախտ, մնել խաբար ա գալի, թե՛ փլան թաքավորը կոնիլ ա գալի էս թաքավորի վրա: Չիմ իրար են խառնըվըմ, թաքավորը իրա գորքը թարագըմ ա, իրան էրկու վենձ փեսին էլ գլուխ ա անըմ, գնըմ են կովի:

Շահվելադն իրա կնգանը դըրգըմ ա, ասըմ ա.— Թաքավորին ասա մի ձի էլ ինձ տա, ես էլ գնամ կովի:

Գնըմ ա ասըմ, եդ չիմն էլ վրեն ծիծաղըմ են, ասըմ են.— Վա՛յ քու գլխին, քու քաչալը տեր գնալ դուշմանին ջարթիլ, մեր աժդհա մարթիքն ընդի ի՞նչ են, որ դրան տինք դրգիլ, որ գնա ձիանու ոտի տակն ընգնի:

Դա որ շատ խնթրըմ ա, եդ մի դաթըր էլ դրան են տալի: Եդ դաթրին վեր էլած գնըմ ա քաղաքի դրաղին հորըքըմ, իրա Բանգլիբարի մագը ծուխ ա անըմ, տենըմ ա հրես էկավ: Իրա շորերը հանըմ ա, թուրը կոխկիցը քաշ անըմ, նետ ու անեղըն ուսովը գձըմ, գնըմ ա կովին հասնըմ:

Գնըմ ա տենըմ հրե դուշման թաքավորը մտել ա իրանց թաքավորի ֆողն ու իրանց գորքին ջարթըմ ա: Թագավորն ու էն էրկու փեսեն հլէ-նհե գիդեին ոչ ինչ անեն: Շահվելադըս գնըմ ա իրա թուրը հանած ընգնըմ ա դուշման գորքի մեջը, դես տալի, դեն ա տալի, ինչքան ինքն ա բանֆոքի անըմ, էրկու էնքան Բանգլիբարը:

Թաքավորն ըտի մնըմ ա հուշ էլած, ասըմ ա.— Էս ո՞վ ա էս քաջը իմ գորքի միջին, որ ես ճնանչըմ չեմ:

Եդ ա մտիկ անըմ, տենըմ ա իրա էրկու փեսեն հրե իրանց ձիանու փորի տակին կուչ էկած: Շահվելադը տալիս ա ջարթըմ ա, եդ ա մտիկ անըմ, տենըմ ա թաքավորը մենակ կաղնած, դուշմաննուցը մի քանիսը դբա նրան են գնըմ, որ սպանեն: Էն էրկու փեսեն էլ եդ են փախչըմ, Բանգլիբարի գլուխը եդ ա թեքըմ, գալիս ա դուշմաննու մի քանըսին թոլ ա անըմ, մնի թուրը ոնց ա ըլըմ, Շահվելադի մատը յարալու ա անըմ: Թաքավորը որ տենըմ ա արինը չըռչըռըմ ա, իրա ձեռնաղուխը հանըմ ու Շահվելադի մատը կապըմ: Շահվելադը եդ սուրհա ա անըմ, դուշմանի գորքը տենըմ ա կարըմ չի, եդ ա փախչըմ: Էն էրկու փեսեն գալիս են թաքավորի չորսի կուռն առնըմ, սիլիբիլի անըմ, օգանգուն բռնըմ ձիուն վեր ըլացնըմ, եդ մթամ իրանք էլ են կովըմ, ընգնըմ են դուշմանի փախչող մի քանի ֆոքու եղնա:

Շահվելադը ինչքան կտորըմ ա կտորըմ, մեկելին էլ քշըմ ա իրանց ֆողն անց կացնըմ, եդ դառնըմ, էն էրկու փեսին էլ ամընտուն մի սիլլա տալի, ասըմ ա.— Չկել հմի բա ո՞րդի էիք մտել: Թաքավորի գորքը որ իրար ա գալի, եդ վախտը Շահվելադը Բանգլիբարին պլետըմ ա, Բանգլիբարը հենց թոչըմ ա, որ ոչով կարըմ չի տենա, թե դվորը գնաց:

Թաքավորն ասըմ ա.— Ո՞վ էր էն քաջը, թող աղաք գա:

Ոչով ձեն չի հանըմ, էն էրկու փեսեն ըղաքին ցից են ըլըմ: Եդնա գորքը ուրխանալով, ձիանը չիդիրի գձած, տուն են գալի: Շահվելադն էլ գալիս ա իրա Բանգլիբարի ճկատիցը պաչըմ, վեր ա թողըմ, եդ իրա դառինը ծածկըմ, դաթրին վեր ըլըմ, գալիս ա տուն: Գալիս ա տենըմ չիմն էլ ուրախ են, մենակ իրա նաչար կնիկն ա քեփը խարաբ, մին էլ թաքավորը, որ կարացել չի

գոնու, թե իրա քաջն ով էր, որ դուշմանին բանֆոքի արավ: Եդ էն էրկու փեսեն ու իրանց կնանիքը ծիծաղում են, թե.— Հա՛յ, քաչալը կովիցը գալիս ա, հա՛յ, քաչալը գալիս ա:

Հմա նա նրանց վրա ծիծաղելով գնում ա մտնում իրա դագանոցը:

Թաքավորը որ շատ միտկն ա անում, ասում ա.— Խորակ հագրեցեք, գինի արադ հագրեցեք, քեփ անիլ տիմ տալ:

Հագրում են, գորքը գալիս ա շարվում սուփրենու դրաղները, թաքավորն էլ նստում ա վերի ծերին, իրա էրկու փեսեն էլ ամենքը մի դրաղին:

Եդ թաքավորն ասում ա.— Ո՞վ էր էն քաջը, թող աղաք գա:

Ոչ ով ձեն չի հանում: Շահվելադն էլ դռան տակին նստել ա, քյասիբ-քյուսուբնու հետ զրից անում, ուտում են, խմում: Թաքավորը միտն ա գձում, որ իրա ձեռնաղուլիսը փթաթել ա էն քաջի մատին: Վեր ա կենում, հերթով չիմնու մատին էլ մտիկ ա անում, հերթը հասնում ա քաչալին:

Քաչալն էլ մթամ թե բանի խաբար չի, ընդի զրից ա անում սուփրավորնու հետ: Թաքավորն աչկը գձում ա, տենում ա իրա ձեռնաղուլիսը քաչալի մատին փթաթած: Հլե նհե հուշ ա ըլում:

Ասում ա.— Քաչա՛յ, դուն էի՞ր էն քաջը:

Ասում ա.— Չէ՛, ով որ թաքավորի ու իրա կնգա հմար ասլանի կաթն ու միս ա բերել, նա էր էն քաջը:

Խալիսը չիմ պել ա կտրել, էն էրկու փեսեն էլ սրտներուն լընլընգոց են ընգել, էրեսներու ռանգը թոցրել են:

Թաքավորն ասում ա.— Ո՞վ ա բերել ասլանի կաթն ու միսը, իմ էրկու փեսեն չէի՞ն բերել:

Ասում ա.— Դե գնա հարցրու, թե ոնց են բերել:

Էն էրկու փեսին հարցնում ա, ասում են.— Ոնց տինք բերիլ, գնացինք ոսկի տվինք, առանք-բերինք:

Շահվելադն ասում ա.— Սուտ են ասում, ոսկի չեն տվել, գնացեք շալվարներուն հանեցեք, տեհեք ինչ են տվել:

Նրանք ջլիզդան կրմըրտակում են: Թաքավորը շալվարներուն հանիլ ա տալի, տենում ա էրկուսի քամակն էլ ամնուն էրկու հետ դամդած: Նհանք ընդի խայտառակ են դառնում, էն էրկու քիրն էլ ընդի ճաքում են, Շահվելադի կնիկը քիչ ա մնում գա, ուրխասալուց իրա մարթի խտիտն ընգնի: Ըտի նոր Շահվելադը դառինք գլխիցը հանում ա, մազը ծուխ ա անում, մին էլ տենում ա Բանգլիբարն էկավ, շորերը փոխում ա, թաքավորի ըղաքին կաղնում:

Ասում ա.— Ես փլան թաքավորի տղեն եմ:

Ըտի նոր թաքավորը նրան պըչպաչորում ա, էն էրկու փեսին էլ իրա պալատիցը կնանոնց հետ դուս ա անում, օխտն օր, օխտը քշեր հրսանիք են անում:

Թաքավորն ասում ա.— Ես էս պռավել եմ, իմ թաքավորութինը, քեզ եմ տալի:

Ասում ա.— Չէ: Ես գնալ տիմ իմ հոր թաքավորութինը, դու քո տեղը կկենաս, ես՝ իմ, եփ որ տեղդ նեղ ըլի, ինձ իմաց արա, ես քու կշտին եմ:

Իրա կնգանը վեր ա ունում, Բանգլիբարին թարթլամիշ են ըլտմ, գնում են իրա հոր տուն: Գալիս ա հոր պալատիցը հեռու մի պալատ ա վեր թողում, իրա հետի դոշունը ըտի թողում իրա կնգա կշտին, ինքը գնում ա տուն: Գնում ա տենում իրա նաչար հերը քոռացած, մի օթախի մեշ ա գձած, իրա մերը թախտին ա նստել, սրանրա հետ շնութիննի ա անում:

Գնում ա հոր կուշտը, ճտովն ա ընգնում, ասում ա.— Ես Շահվելադն եմ:

Հերը պաչում ա ու լաց ըլում: Ասում ա.— Ես էսա մեռնիլ տիմ, իմ երգիրը քեզ եմ թողում, դու քո անսկամ մոր հախիցն արի:

Ասում ա.— Չէ՛, դուն էլի թաքավոր կլիս:

Իրա մորը բռնում ա մի դաթրի պոչից կապիլ տալի, Էնքան քաշ ա տալի, վենձ թիքեն անգաճն ա թողում, ասում ա.— Քեզ պես անսկամ մերն իմ պետկը չի:

Հորը տանում ա թախտին նստացնում, իրա կնգանն էլ բերում, թագա իրա հոր տանը հրսանիք անում, պրծնիս ամեն ցավիցժողից, ինչ պրծնում են. նրանք հասնում են իրենց մուրազին, դուն էլ հասնիս քու մուրազին: